

O r i e n t a l i a

ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի
դասախոսների և ասպիրանտների
գիտական հոդվածների ժողովածու

Պրակ16

Իրանագիտական Կովկասյան կենտրոն

Երևան

2015

ՀՏԴ 80:93/94

ԳՄԴ 80/84 +63.3

Օ-880

**Հրատարակվում է ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի
Գիտական խորհրդի որոշմամբ**

Օ-880

Օրինատալիս: Հոդվածների ժող.- Եր.:

«Իրանագիտական Կովկասյան կենտրոն» հրատարակչ.,2015.
Պրակ 16/Խմբագրական խորհուրդ՝ Վ. Առաքելովա, Լ.
Շեխոյան, Վ. Ոսկանյան, Գ. Սարգսյան, Գ. Մելիքյան,
Ա. Սաֆարյան/- 116 էջ:

Ժողովածուն ընդգրկում է ԵՊՀ Արևելագիտության Ֆակուլտետի դասախոսների և ասպիրանտների գիտական ուսումնասիրությունները, որոնք նվիրված են արևելագիտության տարբեր խնդիրներին:

**Շարքը հրատարակվում է պրոֆ. ԳԱՌՆԻԿ ԱՍՍՏՏՅԱՆԻ
ընդհանուր խմբագրությամբ:**

Պրակի պատասխանատու՝ Դիանա Հովհաննիսյան

ՀՏԴ 80:93/94

ԳՄԴ 80/84 +63.3

ISBN 978-99930-69-89

Պրակը հրատարակվում է ԻԿԿ միջոցներով

©Իրանագիտական Կովկասյան կենտրոն, 2015

ԿՈՎԿԱՍՅԱՆ ՊԱՐՄԿԵՐԵՆՈՒՄ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ

ԱՐՏՅՈՄ ՏՈՆՈՅԱՆ

ԵՊՀ Իրանագիտության ամբիոն

Կովկասյան պարսկերենի կամ թաթերենի քանակական թվականների կազմության համակարգում առկա են այնպիսի ձևեր, որոնք հատուկ չեն իրանական լեզուների այն ճյուղին, որին պատկանում է այս լեզուն: Փորձ է արվել քննության առնել թաթերենում առկա, այսպես կոչված, «անհամապատասխանություններ»-ը իրանականի հարավարևմտյան ճյուղի լեզուների հետ համաժամանակյա և տարաժամանակյա կտրվածքով համեմատության մեջ և այդ ճյուղի շրջանակներում բացատրություն չունեցող առանձնահատկությունների պատասխանները գտնել համեմատական արեալային տիպաբանության օգնությամբ:

Թաթերենի բոլոր բարբառներում, բացառությամբ ապշերոնյան բարբառախմբի¹, քանակական թվականների տասին հաջորդող և քսանին նախորդող շարքը (11-19) իր կազմությամբ շեղվում է իրանական լեզուների հարավարևմտյան շարքին հատուկ ձևերից² և հանդես բերում թյուրքական լեզուներին հատուկ կազմության համակարգ (տե՛ս՝ աղ. 1):

¹ Ցավոք, ապշերոնյան բարբառախմբից մեր ունեցած սակավաթիվ տեքստերում տեղ չի գտել թվականների 11-19 շարքից որևէ օրինակ, և այս առումով ստիպված ենք հենվել միայն Բ. Միլլերի փոխանցած այն տեղեկության վրա, համաձայն որի՝ Ապշերոնի թաթերենում հաշվարկը ընթանում է *yonza, donza ...* ևն կարգով (Б. Миллер, *Таты, их расселение и говоры*, Известия Об-ва обслед. и изучения Азербайджана, вып. VIII, Баку, 1929: 32): Եթե Բ. Միլլերի այս տեղեկությունը ճիշտ է, ապա այս համատեքստում առեւելի հնչյունական ընդհանրություն կա Ապշերոնի թաթերենի և հյուսիսային թալիշերենի միջև (հմմտ.՝ աղ. 2):² Իրանական լեզուների հարավարևմտյան ճյուղում քանակական թվականների այդ շարքը հանդես է բերում հնդեվրոպական լեզուների մեծ մասին հատուկ կազմության համակարգ, որտեղ միավորը նախորդում է «տասն» (նիս. **dekni*) թվականին երբեմն ուղղակիորեն, իսկ որոշ դեպքերում միավորը տասնավորին կապող միջանցիկ օգնությամբ (օր.՝ ժամ. պրսկ. *sizdah*, դաս. պրսկ. *sizdah*, միջ. պրսկ. *sēzdah*, ավ. *θridasa*՝ *θridasa*, սանսկ. *tráyodashan*, հին հայ. *երեքուսասն*, ռուս. *двенадцать*, հին. սլավ. *дъванадесѣте*, գերմ. *dreizehn*, մբգ. *drizehen*, հբգ. *drizehan*, լատ. *tredecim*, հին հուն. *τρισκαίδεκα* «տասներեք» և այլն): Սրա շուրջ ավելի մանրամասն տե՛ս՝ Նր. Աճառյան, *Լիակատար քերականություն հայերեն լեզվի*, հատ. 1, Երևան, 1952:190-198:

Աղյուսակ 1.

11-19 թվականների կազմությունը թաթերենում					
Իրանական				թուրքական	
կովկասյան պարսկերեն	ժամ. պրսկ.	դաս. պրսկ.	միջ. պրսկ.	թուրք.	աղբ.
dahyak (դոն. dāyak, Լահ. dahyak/dahyakto ¹ , մադ. dayek, հրեա թաթ. yazdeh ²) ³	Yāzdah	yāzdah	Yāzdah	on bir	on bir
dahdü (դոն. dādū,	davāzdah	duvāzdah	dvāzdah <	on iki	on iki

¹Լահիջի բարբառում *dahyakto* ձևում հանդես եկող *to*-ն (հմմտ.՝ ժամ. պրսկ. *tā*, տաջ. *tō*), որը լայն կիրառություն ունի կովկասյան պարսկերենի մյուս բարբառներում ևս, նախապես ունենալով դասանիշային (numerative) կիրառություն, կորցրել է իր նախնական նշանակությունը և այժմ *-ta/-to* ձևերով հանդես է գալիս քանակական թվականի հետ միաձույլ բարբառակիրների կողմից չգիտակցվելով ու չընկալվելով որպես առանձին բառ: Մ. Հաջիեր թաթական բարբառներում առկա քանակականների սերտաձած այս *-tā* դասանիշի հետքն է փորձել տեսնել Ավեստայի լեզվի *hapta* «յոթն» թվականի մեջ (Марсуд Насырjev, *Аз`рбajсан татларыннын дили*, Бақы 1995: 165), ինչը բացարձակ անհիմն է նախ այն պատճառով, որ ալ. *hapta*-ում *ta*-ն հինյ. *septim*-ին հանգող արմատի մաս է կազմում, և երկրորդ՝ առաջին դեպքում գործ ունենք երկար *ā*-ի, իսկ ալ. *hapta* բառում կարճ *a*-ի հետ, որը հնից միջին իրան. լեզվավիճակի անցման ժամանակ վերջահար շեշտի տեղափոխության հետևանքով ընկել է տալով *haft* ձևը: Բերված աղյուսակում *-ta/-to* -ի մեկ օրինակ ենք միայն նշել ընդհանուր անդրադարձի համար չցանկանալով թաթերենում ընդհանուր ընդունելություն ունեցող այս ձևի անընդհատ կրկնություններով ծանրաբեռնել աղյուսակը:

²G. Authier, *Grammaire juhuri, ou judéo-tat, langue iranienne des Juifs du Caucase de l'est, Beiträge zur Iranistik*, Band 36, Wiesbaden 2012: 81. Աղյուսակում հրեական թաթերենին առնչվող բոլոր օրինակները վերցված են այս աշխատանքից: Ս. Գրյունբերգի Լ. Դավիդովայի հետ համահեղինակած աշխատանքում (А. Грюнберг, Л. Давыдова, «Татский язык», *Основы иранского языкознания*, Москва, 1982: 253), որտեղ «հրեական թաթերենը» տրված է «հյուսիսային թաթերեն» եզրով, թվականների այդ շարքը գրեթե հավընկնում է Ժ. Օթիեի արձանագրած ձևերի հետ, միայն միավորներին հաջորդող «տասը»-ի *deh*-ի փոխարեն *dah*-ի ձևի, նաև «տասներկու» և «տասնինը» բառերում նախադաս միավորներում հնչունական որոշակի տարբերություններով (հմմտ. *yazdah, dvazdah, sizdah, čordah, pazdah, šazdah, hafdah, hazdah, nazdah*):

³Փակագծերում բերված օրինակները վերաբերում են միայն այն դեպքերին, երբ համապատասխան բարբառում ականատես ենք ընդհանուր թաթականից տարբերվող արտասանության կամ որևէ այլ ձևի: Այն դեպքերում, երբ նույն բարբառից որոշ տեղերում ունենք օրինակներ, իսկ մյուսներում՝ ոչ, ապա կամ գործ ունենք համաթաթականին համապատասխանող արտասանության հետ, կամ չունենք տվյալ ձևի՝ համապատասխան բարբառային վկայություն:

լահ. dahdi/ duzdah, մաղ. dadu, հրեա թաթ. düvazdeh)			իբ. *dva- dasa		
dahsa (ղոն. dāsa, հրեա թաթ. sizdeh)	Sizdah	sīzdah	sēzdah < իբ. *θridasa	on üç	on üç
dahčār (ղոն. dāčār, լահ. dahčor, մաղ. dačoar ¹ , հրեա. թաթ. čordeh)	čahārdah	čahārdah	čahārdah < իբ * čaθrudasa	on dört	on dörd
dahpanj (ղոն. dāpanj, հրեա թաթ. pazdeh)	pānzdah	pānzdah	pānzdah < իբ. *panča- dasa	on beş	on beş
dahšaš (ղոն. dāšaš, լահ. dahšeš, հրեա թաթ. šazdeh)	šānzdah	šānzdah	šāzdah	on altı	on altı
dahhaft (ղոն. dāhaf, հրեա թաթ. hofdeh)	hefdah	haftdah	haftdah < իբ. *hafta- dasa	on yedi	on yeddi
dahhašt (ղոն. dāhaš, հրեա թաթ. hejdeh)	hijdah	hašt dah	hašt dah < իբ. *ašta- dasa	on sekiz	on səkkiz
dahnü (ղոն. dānū, լահ. danih, danuv ² , քիլ. danü ³ , հրեա թաթ. nūzdeh)	nūzdah	nūzdah	nōzdah < իբ. *nava- dasa	on dokuz	on doqquz

Աղյուսակից դժվար չէ կոսաել, որ Ադրբեջանի տարածքում խոսվող թաթական բարբառները թյուրքական լեզուների հետ շփման արդյունքում կորցրել են քանակական թվականների 11-19 շարքի կազմության նախնական բնիկ վիճակը՝ անցնելով թվականների այդ շարքի համար իրանականին ոչ հատուկ վիճակի: Հրեական թաթերենը, որ խոսվում է

¹Դաշտային աշխատանքի նյութեր, ինֆորմատոր 86 ամյա Արտյոմ Ղրաղյան(Խաչվատ), 17.07.2014:

²Ս. Ղալբախյան, *Համառոտակի Մադրասայի հայ-թաթերենի մասին*, ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների, 1957 (4): 91:

³Դաշտային աշխատանքի նյութեր, ինֆորմատոր 51 ամյա Սոֆյա Պոզոսովա (Բուդյոնովսկ), 13.10.2014:

հիմնականում Դադստանում, ընկնելով ադրբեջաներենի տարածման ծայր հյուսիսային սահմանագծին, հետևաբար դուրս մնալով դրա ուղղակի ազդեցությունից, պահպանել է այս շարքի համար բնիկ տասնավորի հանդեպ միավորի նախադաս վիճակ (օր.՝ *sizdeh, čordeh, pazdeh* են): Լահիջի բարբառում տասներկու թվի համար չնայած ունենք ըստ կազմության տիպաբանության՝ ադրբեջաներենին հարող *dahdi*¹ ձևը, սակայն սրա կողքին շարունակում են կենդանի մնալ նաև *duzdah, duzdahto*² ձևերը, որոնք, ըստ երևույթին, ներկայանում են որպես երկլեզվության արդյունքում հին բնիկ ձևի կազմության փոփոխությունից փրկված հնաբանություններ:

Արեալային տիպաբանության համատեքստում քանակական թվականների 11-19 շարքի դիտարկումը, ընդհանրություններ է հանդես բերում ոչ միայն թաթերենի ու թյուրքական լեզուների, այլև հայերենի, հյուսիսային թալիշերենի, նաև հունարենի³ միջև: Ընդ որում, վերջին երեքն էլ նախապես ունեցել են այդ շարքի այլ՝ հնդեվրոպականին հատուկ կազմություն և միայն հետո, հավանաբար հենց թյուրքական լեզուների ազդեցությամբ, անցել են տասնավորի հանդեպ միավորի հետադաս դիրքով կազմության (տե՛ս՝ աղ. 2):

Աղյուսակ 2

¹Вс. Миллер, *Татские этюды, Часть II, Опыт грамматики татского языка*, Москва, 1907: 33.

²G. Hüseynova, *Lahic tatların dili*, Bakı, 2002: 83.

³Արդի հունարենում «տասնմեկ» և «տասներկու» թվականները պահպանում են տասնավորի նկատմամբ միավորի առաջադաս դիրքի հին հունականին հատուկ համակարգը, մնացածների դեպքում սկսած «տասներեքից» մինչև «տասնինը», միավորները տասնավորի նկատմամբ հետադաս դիրք ունեն հանդես բերելով կազմության տիպաբանական ընդհանրություն թուրքերենի հետ:

<i>Հայերեն</i>		<i>Հունարեն</i>		<i>հյուսիսային թալիշերեն</i>	
Գրաբար	արդի հայերեն	հին հունարեն	արդի հունարեն	ըստ Բ. Միլլերի արձանագրած վիճակի (1953) ¹	ըստ արդի վիճակի
Մետասան	Տասնմեկ	ἕνδεκα	Ένδεκα	Yonza	yonza/ dāvi i
Երկոտասան	տասներկու	δῶδεκα	Δώδεκα	Donza	donza/ dāvi d1
Երեքոտասան	տասներեք	τρεῖσκαίδεκα	Δεκατρεῖς	Senza	senza/dāvi se
Չորեքոտասան	տասնչորս	τετταρες καί δέκα	δεκατέσ αρες	Čorda	čorda/dāvi čo
Հնգետասան	տասնհինգ	πεντεκαίδεκα	δεκαπέντε	Ponza	ponza/ dāvi penj
Վեշտասան	Տասնվեց	έκκαίδεκα	δεκαέξι	Šenza	šenza/dāvi šaš
Եւթնտասան	Տասնյոթ	έπτακαίδεκα	δεκαεπτά	Havda	havda/ dāvi haft
ութնտասան	Տասնութ	ὀκτωκαίδεκα	Δεκαοκτώ	Hažda	hažda/ dāvi hašt
իննտասան	Տասնինը	έννεακαίδεκα	Δεκαεννέα	Nonza	nonza/ dāvi nav

Աղյուսակը հստակ ցույց է տալիս, թե ինչպես մի լեզու, որ նախապես ունեցել է կազմության այլ համակարգ, անցում է կատարում դրսեկ տարրի բերած նոր համակարգին: Այս դեպքում եկամուտ համակարգը փոխել և փոխում է տարածաշրջանի հին լեզուներին հատուկ համակարգը, որով էլ պայմանավորված են նշված լեզուների և կովկասյան պարսկերենի միջև այս խնդրի հետ կապված տիպաբանական ընդհանրությունները: Աղյուսակում բերվածներից հատկանշական է հյուսիսային թալիշերենի օրինակը, որը, փաստորեն, ընդամենը վերջին հիսուն տարվա ընթացքում քննարկման առարկա շարքի կազմության փոփոխության է ենթարկվել, և այդ փոփոխությունն անպայման պայմանավորված է հյուսիսային թալիշների երկլեզվության փաստով:

Հարևան լեզուների օրինակները, ինչպես նաև պարսկերենի (հնից եկող միջին, դասական և ժամանակակից) նյութը բավարար են ցույց տալու համար, որ կովկասյան պարսկերենում քանակական թվականների

¹Б. Миллер, *Талышский язык*, Москва, 1953: 128.

այդ շարքի կազմությունը թյուրքական լեզուների ազդեցությամբ բնիկ ձևի եկամուտ համակարգով փոխարինման արդյունք է:

Ինչ վերաբերում է տասնորդականների 20-90 շարքին, ապա, չնայած ներկայումս կովկասյան պարսկերենի բարբառների մեծ մասում, այդ թվում և հրեական թաթերենում տարածված են իրանական ծագման տասնորդական դրությունը և նաև աղբջանական ձևերը, այնուամենայնիվ, 60-90 միջակայքի հետ կապված, կովկասյան թաթերենի Խիզիի, Ռուսթովի, Ղուբայի, նաև Ղոնաղբենդի բարբառներում արձանագրված է նաև հաշվարկի քասնորդական դրություն¹: Նշված շրջաններում, հատ

կապես տարեցների խոսքում, ի հակադրություն հարավարևմտա-իրանական ենթաճյուղի բնիկ ձևերի՝ հիշվում են քննարկվող թվականների հետևյալ ձևերը՝ *sabist* (բառ.՝ երեք քսան) «վաթսուն», *sabistdah* (բառ.՝ երեք քսան տասր) «յոթանասուն», *čārbist* (բառ.՝ չորս քսան) «ութսուն» և *čārbistdah* (բառ.՝ չորս քսան տասր) «իննսուն» (տե՛ս աղ. 3):

Աղյուսակ 3.

Կովկասյան պարսկերեն (Ղուբա, Խիզի, Ռուսթով, Ղոնաղբենդ)	ժամ. պարսկերեն	դասական պարսկերեն	միջին պարսկերեն
Sabist	šast	šast	šast <h. իր. *xšwašti-
Sabistdah	haftād	Haftād	haftād (վաղ միջ. պրսկ. haftāt) <h. իր. *haftāti-
Čārbist	haštād	Haštād	haštād (վաղ միջ. պրսկ. haštāt) <h. իր. *aštāti-
Čārbistdah	navād	Navaδ	navad (վաղ միջ. պրսկ. navat) <h. իր. *navati-

¹Б. Миллер, *Таты, их расселение и говоры*, նշվ. տեղ., նույնի՝ «Анализ персидского числительного devist «двести»», *Яфетический сборник VII* (1932), стр. 115; А. Грюнберг, *Язык североазербайджанских татов*, Ленинград, 1963: 45; Марсуд Насыјев, *Аз' рбајсан татларынын дили*, Бақы 1995: 166-167.

Սա հետաքրքիր առանձնահատկություն է, քանի որ քսանորդական (վիզեզիմալ) դրությունը նախահրանական լեզվին խորթ երևույթ է, դեռևս հին իրանական լեզվադարաշրջանից սկսած՝ գրավոր հուշարձաններում հանդիպում է միայն տասնորդական դրությունը:

Այնուամենայնիվ, քսանորդական դրության հետք ենք տեսնում իրանական լեզուներից ոչ միայն թաթերենում, այլև մերձհինդուկուշյան և պամիրյան հատվածի արևելաիրանական լեզուներում, ինչպիսիք են աֆղաներենը, յաղոբերենը, վախի լեզուն, յագգուլամերենը, յիդդան, փարաշին, օրմուրին¹, Կովկասում խոսվող օսերենը², նաև արևմտաիրանական ճյուղին պատկանող նախկինում Քաշաթաղի (պատմ. Սյունիքի Աղահեճք գավառ) և Քարվաճառի (պատմ. Արցախի Ծար գավառ) շրջաններում խոսված քրդերենում³, բելուջերենում⁴: Ֆ. Ռոզենբերգը, առանձնացնելով քսանորդական դրության տարածման 3 օջախ (1. Հինդուկուշ, որի շուրջ տարածվող բազմաթիվ հնդիրանական ժողովուրդներ ունեն հաշվարկի ոչ հնդիրանական քսանորդական դրություն, 2. Կովկաս, որտեղ այդ նույն համակարգով են հաշվում նաև օսերը, 3. Եվրոպա), գտնում է, որ դժվար է գենետիկական կապ տեսնել այդ ամենի մեջ՝ հաշվի առնելով նշված համակարգը կիրառող ժողովուրդների աշխարհագրական, մշակութային և գենետիկական տարբերությունները⁵: Հաշվի առնելով, որ ժամանակակից հնդեվրոպաբանության մեջ ապացուցված է նախահնդեվրոպական լեզվում բացառապես միայն տասնորդական դրության գոյությունը, որտեղ 20-90 շարքի համար վերականգնված ձևերը ներկայանում են որպես բարդ կապակցություններ, որոնց առաջին բաղադրիչները հանդիսանում են «տասը» նշանակող ձևին նախորդող 2-9 միավորները⁶, ապա պետք է ենթադրել որ բոլոր հնդեվրոպական լեզուների, այդ թվում նաև կովկասյան պարսկերենի համար քսա-

¹R. Emmerick, "Iranian." In: J. Gvozdanović (ed.), *Indo-European numerals*, Berlin, 1992: 311-313 (= chap. 8).

²В. Абаев, *Грамматический очерк осетинского языка*, Орджоникидзе, 1959: 30-31.

³О. Вильчевский, «Вигезимальный счет в курдском», в кн. И. И. Мещанинов (ред.), *Памяти академика Н. Я. Марра*, Москва-Ленинград, 1938: 67-76; Ч. Бакаев, *Язык азербайджанских курдов*, Москва, 1965: 112.

⁴A. Korn, "Counting sheep and camles in Balochi". In: М. Н. Боголюбов (ред.), *Индонранское языкознание и типология языковых ситуаций. Сборник статей к 75-летию профессора А. Л. Грюнберга (1930-1995)*, Санкт-Петербург, 2006: 203.

⁵Ф. Розенерг, «Материалы по двадцатому счету», в кн. *Языковедные проблемы по числительным*. Сборник статей, Ленинград, 1927: 165 – 169.

⁶В. П. Мажюлис, «Индоевропейская десятичная система числительных», *Вопросы языкознания 1956 (4)*: 56-57.

նորդական դրությունը արեալային ազդեցությունների ու ենթաշերտերի արդյունք է:

Ջ. Էդելմանը քրդերենում և թաթերենում քսանորդական դրության առկայությունը բացատրում է կովկասյան լեզուների ազդեցություններով, իսկ Պամիրի, Հինդուկուշի և սրանց հարող տարածքներում խոսվող հնդիրանական լեզուներում առկա քսանորդական դրությունը համարում է բուրուշասկյան ենթաշերտի արդյունք¹: Կովկասյան ազդեցություններով է բացատրվել նաև օսերենի քսանորդական դրությունը²:

Կովկասյան պարսկերենում քսանորդական դրության երկրորդական փուլերի արդյունք լինելը տրամաբանական է համարում նաև Ա. Գրյունբերգը՝ ելնելով նրանից, որ քսանորդական դրության որևէ հետք չկա հենց պարսկերենում, իսկ թաթերենի հարևանությամբ տարածվող կովկասյան լեզուներում այս համակարգը լայն տարածում ունի: Մակայն սրա հետ մեկտեղ հեղինակը գտնում է, որ թե կովկասյան պարսկերենում և թե հրեական թաթերենում թվականների այդ շարքը փոխառված է պարսկերենից, ինչի օգտին խոսում է հետձայնավորային դիրքերում –d-ի պահպանումը ակնկալվող թաթական –r անցման դիմաց³: Իրանական լեզուներում, մասնավորապես նաև քրդերենում, քսանորդական համակարգի երկրորդական լինելը կասկածի տակ է դրել նաև Օ. Վիլչևսկին՝ հենվելով այն փաստի վրա, որ այսպես կոչված «ղարաբաղյան քրդերենը», դատելով այս լեզվի տարածման աշխարհագրական սահմաններից, չէր կարող որևէ կերպ շփման մեջ գտնվել կովկասյան լեզուների հետ, և հետևաբար քսանորդական համակարգի կրող բոլոր իրանական լեզուները պետք է ունենան մեկ ընդհանուր աղբյուր⁴: Ըստ երևույթին, քրդերի այս տարածք ներթափանցման ճանապարհները ևս բացառում են դրա կովկասյան լեզուների հետ շփման տարբերակը⁵: Կովկասյան պարսկերենի որոշ բարբառների քսանորդական համակարգի 4 օրինակին (sabist,

¹Д. И. Эдельман, «К генезису вигезимальной системы числительных», *Вопросы языкознания* 1975(5): 36-37.

²А. Фрейман, «Забытые осетинские числительные», в кн. И. Крачковский (ред.), *Сергею Федоровичу Ольденбургу: к пятидесятилетию научно-общественной деятельности: 1882-1932. Сборник статей Академия Наук СССР*, Ленинград, 1934: 158-163.

³А. Грюнберг, Л. Давыдова, *указ. раб.*, 253.

⁴О. Вильчевский, *указ. раб.*: 75.

⁵Հիշատակվող տարածքում՝ ներկայիս Քաշաթաղի և Քարվաճառի շրջանում, քրդերը սկսել են հայտնվել միայն 16-րդ դարից սկսած թուրք-պարսկական պատերազմների արդյունքում: Դեպի այս տարածք քրդական տարրի ակտիվ տեղաշարժ է եղել հատկապես ռուս-պարսկական 1804-1813թթ. և 1826-1828թթ. պատերազմներից հետո (Ս. Аверьянов, *Курды в войнах России с Персией и Турцией в течении XIX столетия*, Тифлис, 1900: 24-28):

sabistdah, čārbist li čārbistdah) Բ. Միլլերը փորձել է ավելացնել ևս մեկը՝ dabist-ը (բառ. տասը քսան՝ 10x20): Հեղինակն այս ձևին հանդիպել է Խիզիի շրջանում, որտեղ ունի Թալիբ Ասլանօղլի հաղորդել է, որ «երկու հարյուրի» -ի համար du sad ձևի հետ միասին օգտագործում են նաև dabist¹: Խիզեցու այս մեկ հաղորդումը պատճառ է դարձել Միլլերի հեղինակած ծավալուն մի հոդվածի, որտեղ նա փորձ է անում ապացուցել, որ պարսկերենի davist «երկու հարյուր» թվականը լեզվում գոյություն ունեցած քսանորդական դրությունից եկող մնացուկային ձև է, որը միջին պարսկերենից անցել է նոր պարսկերեն²: Իրականում, ժամ. պարսկերենի devist ձևը հավանաբար հանգում է հին իր. *dwai satai³ ձևին և թաթախոսների շրջանում dabist ձևի գոյությունը արդյունք է devist կամ ավելի վաղ duwēst ձևի չհասկանալու հետ կապված՝ դրա dah + bist կերպով մեկնաբանման ու գործածման:

Ընդհանրացնելով կովկասյան պարսկերենում քանակական թվականների կազմության առանձնահատկությունները՝ պետք է ասել, որ այստեղ ականատես ենք եռաշերտ մի համակարգի: Մի կողմից պահպանվում են դրանց կազմության իրանականից ժառանգված գծերը, իսկ մյուս կողմից հանդես են գալիս այնպիսի ձևեր, որոնք իրանական, առնվազն հարավարևմտյան իրանական դիմագիծ չունեն և համեմատական տիպաբանության համատեքստում խոսում են թյուրքական և կովկասյան ազդեցությունների մասին:

Միաժամանակ տեղի է ունեցել նաև հակառակ երևույթը. տարածաշրջանի կովկասյան լեզուների հյուսիսարևելյան ճյուղում, մասնավորապես Թաբասարանի բարբառներում, ռուտուլերենում, ծախուրերենում ևն, բնիկ քսանորդականի փոխարեն տասնորդական դրության գոյությունը երբեմն բացատրվում է նաև թաթերենի ազդեցությամբ⁴:

On some features of Numeral formation in Caucasian Persian

Summary

In the article are presented the structural features of cardinal numerals in Caucasus Persian. Particularly, it is shown through historical and typological

¹Б. Миллер, «Анализ персидского числительного devist «двести»», *Яфетический сборник VII* (1932), стр. 115.

²*նույն տեղ.*: 139-140:

³R. Emmerick, op. cit. 316.

⁴V. Chirikba, «The Problem of the Caucasian Sprachbund» In: P. Muysken, *From linguistic areas to areal linguistic (Studies in Language Companion Series 90)*, Amsterdam, 2008: 60.

comparison the Turkic languages influence on composition of numerals from 11 to 19 in Tat language, as well as are presented the composition features of numerals from 60 to 90 in the range 20-90 in some dialects of Tat language and the effects of Caucasian substratum on these phenomena.

О некоторых особенностях составления числительных на кавказском персидском

Резюме

В статье представлены структурные особенности количественных числительных на кавказском персидском. В частности, на основании исторического и типологического сравнения показано влияние тюркских языков на составление цифр от 11 до 19 в татском языке, а также представлены особенности составления цифр от 60 до 90 в диапазоне 20-90 в некоторых диалектах татского языка и воздействия кавказского субстрата на эти явления.